2026
Հունիս

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Նորքքեփ Սեքյուրիթիզ», «ՀՈԿԱՅ ԿԱՊԻՏԱԼ ԱՍՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ», «ԱԿՄԱՆ ԸՆԴ ԳՐԻՇԿՈ ՔԵՓԻԹԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ», «ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ ՍՈԼՅՈՒՇՆՍ», «ՍՍ ԿԱՊԻՏԱԼ», «Արինս Կապիտալ Մենեջմենթ», «Մասթերմայնդ Մենեջմենթ», «ԷՖ ԱՅ ԷՄ» ՍՊԸ-ներին, «ՀԱՐՄԻՆՈՒՅԱ ՖՈՆԴ ՄԵՆԵՋՄԵՆԹ», «ԲիՍի Մենեջմենթ», «ՌՈՔ Ֆանդս», «Լեգասի Վիժն Քապիտալ» ՓԲԸ-ներին ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի կառավարման թույլտվություն տրամադրելու մասին 3

ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՎՈԼՏԱ», «ՎԱԼԳԵ» ՍՊԸ-ներին տրված գրավատնային գործունեության լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու մասին 3

ՀՀ ԿԲ խորհրդի որոշումը «ՍԻԹԻ» ՍՊԸ-ին արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ տրամադրելու մասին 3

ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ «ԱՆԻ» և «Օպերա» մասնաճյուղերի գործունեության դադարեցումը թույլատրելու մասին 3

ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «ԱԷՍ Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ «Արաբկիր», «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ «Նորք Մարաշ» մասնաճյուղերը գրանցելու մասին 3

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 158Լ որոշումը ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքների սահմանման մասին 3

ՀՀ ԿԲ խորհրդի և ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 117-Ն համատեղ որոշումը ««Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կողմից արտասահմանյան կոնկրետ պետություններում կատարվող ներդրումների մասնակցության աստիճանի որոշման և առավելագույն սահմանաչափի սահմանման կարգը» հաստատելու մասին» 4

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 152-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» 7

ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 153-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 29-ի թիվ 142-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 12

Վիճակագրական ամփոփագիր 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի կառավարման թույլտվություն է տրամադրվել*** «Նորքքեփ Սեքյուրիթիզ», «ՀՈԿԱՅ ԿԱՊԻՏԱԼ ԱՍՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ», «ԱԿՄԱՆ ԸՆԴ ԳՐԻՇԿՈ ՔԵՓԻԹԼ ՄԵՆԵՋՄԵՆԹ», «ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ ՍՈԼՅՈՒՇՆՍ», «ՍՍ ԿԱՊԻՏԱԼ», «Արինս Կապիտալ Մենեջմենթ», «ՄասթերՄայնդ Մենեջմենթ», «ԷՖ ԱՅ ԷՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին, «ՀԱՐՄԻՆՈՒՅԱ ՖՈՆԴ ՄԵՆԵՋՄԵՆԹ», «ԲիՍի Մենեջմենթ», «ՌՈՔ Ֆանդս», «Լեգասի Վիժն Քապիտալ» փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 148Ա, 151Ա, 155Ա, 166Ա, 167Ա, 170Ա, 171Ա, 178Ա, 180Ա, 184Ա, 185Ա, 186Ա):

- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ՎՈԼՏԱ», «ՎԱԼԳԵ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին տրված գրավատնային գործունեության լիցենզիաները (որոշումներ թիվ 149Ա, 150Ա):

- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ են տրամադրվել*** «ՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 157Ա):

- ***Թույլատրվել է*** «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության «ԱՆԻ» և «Օպերա» մասնաճյուղերի ***գործունեության դադարեցումը*** (որոշում թիվ 1/244Ա):

- ***Գրանցվել են*** «ԱԷՍ Կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Արաբկիր», «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության «Նորք Մարաշ» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/252Ա, 1/262Ա):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 6-րդ հոդվածը, 17-րդ հոդվածի 4-րդ մասը, 20-րդ հոդվածի 1-ին մասի «գ» և «ե» կետերը՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2026 թ. հունիսի 16-ի թիվ 158Լ որոշմամբ ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 6.5%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպո գործիքի տոկոսադրույքը՝ 8.0%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների ներգրավման գործիքի տոկոսադրույքը՝ 5.0%:

8 մայիսի 2026 թվականի թիվ 117-Ն

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհուրդ
8 մայիսի 2026 թվականի թիվ 117-Ն

Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար
21 մայիսի 2026 թվականի թիվ 130-Ն

ՀԱՄԱՏԵՂ ՈՐՈՇՈՒՄ

*«Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կողմից արտասահմանյան կոնկրետ պետություններում կատարվող ներդրումների մասնակցության աստիճանի որոշման և առավելագույն սահմանաչափի սահմանման կարգը» հաստատելու մասին **

Նպատակ ունենալով ապահովելու կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների աշխարհագրական դիվերսիֆիկացիայի համար բավարար ճկունություն,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 16-րդ մասը և «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի դրույթներով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը որոշում են.

1. Հաստատել «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կողմից արտասահմանյան կոնկրետ պետություններում կատարվող ներդրումների մասնակցության աստիճանի որոշման և առավելագույն սահմանաչափի սահմանման կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան

14 մայիսի 2026 թ.

ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյան

21 մայիսի 2026 թ.

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2026 թ. մայիսի 8-ին (ՀՀԳՏ, 22.06. 2026):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2026 թվականի մայիսի 8-ի թիվ 117-Ն
և
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
2026 թվականի մայիսի 21-ի թիվ 130-Ն
համատեղ որոշման

ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԿՈՆԿՐԵՏ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՈՐՈՇՄԱՆ ԵՎ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳ

1. Կուտակային կենսաթոշակային ֆոնդերի ակտիվները կարող են ներդրվել մեկ արտասահմանյան պետությունում առավելագույնը զուտ ակտիվների արժեքի 30 տոկոսի չափով, եթե արտասահմանյան պետությունն ունի Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (Մուդիզ) վարկանշային գործակալությունների կողմից տրամադրված ԱԱ-(Աա3) և բարձր վարկանիշ: Մեկից ավելի վարկանիշների առկայության դեպքում հիմք է ընդունվում ամենացածր վարկանիշը:
2. Մեկ արտասահմանյան պետությունում կատարվող ներդրումների սահմանաչափի հաշվարկման ժամանակ ակտիվները ներառվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի ««Ներդրումային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման կարգը» կանոնակարգ 10/04-ը հաստատելու մասին» թիվ 335-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման կարգը» կանոնակարգ 10/04-ի համաձայն պարտադիր կենսաթոշակային ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկում ներառված արժեքի մեծության չափով՝ ըստ հիմքում ընկած ակտիվի թողարկողի գտնվելու երկրի, եթե այլ բան սահմանված չէ սույն կարգով:
3. Եթե կենսաթոշակային ֆոնդը ներդրում է կատարում ներդրումային ֆոնդերում, ապա մեկ արտասահմանյան պետությունում կատարվող ներդրումների սահմանաչափի մեջ հաշվի է առնվում ներդրումային ֆոնդի ակտիվների՝ ըստ երկրների կառուցվածքը: Ըստ երկրների ներդրումների վերաբերյալ տեղեկատվության անհասանելիության դեպքում սահմանաչափի մեջ ներառվում են ներդրումային ֆոնդի այն ակտիվները, որոնց կշիռը տվյալ ներդրումային ֆոնդի ակտիվներում գերազանցում է հինգ տոկոսը:
4. Կենսաթոշակային ֆոնդի ակտիվներում ներառված ածանցյալ ֆինանսական գործիքները մեկ արտասահմանյան պետությունում կատարվող ներդրումների սահմանաչափի մեջ հաշվի են առնվում հետևյալ չափով՝
    1) ֆորվարդ և ֆյուչերս գործարքները՝ մեկ պայմանագրի հիմքում ընկած ակտիվի քանակի և ակտիվի շուկայական արժեքի արտադրյալի չափով,
    2) օպցիոն գործարքները՝ մեկ օպցիոն պայմանագրի հիմքում ընկած ակտիվի քանակի, ակտիվի շուկայական արժեքի և օպցիոնի դելտայի (օպցիոնի հիմքում ընկած ակտիվի գնի մեկ միավոր փոփոխման արդյունքում առաջացած օպցիոնի պարգևավճարի (գնի) փոփոխման չափը) արտադրյալի չափով,
    3) այլ ածանցյալ գործիքները՝ ֆոնդի՝ ածանցյալ պայմանագրի հիմքում ընկած ակտիվի նկատմամբ ունեցած ռիսկի մեծության չափով՝ համաձայն սույն կետի 1-2-րդ ենթակետերով սահմանված մոտեցումների:
5. Մեկ արտասահմանյան պետությունում կատարվող ներդրումների սահմանաչափի հաշվարկման ժամանակ զբաղեցրած հակառակ դիրքերի արժեքները նվազեցվում են:
6. Միջազգային կազմակերպությունների կողմից թողարկված արժեթղթերում ներդրումները չեն ներառվում մեկ արտասահմանյան պետությունում կատարվող ներդրումների սահմանաչափի հաշվարկման մեջ:

7. Այն դեպքում, երբ սույն կարգի 4-րդ կետով նախատեսված գործիքների հիմքում ընկած է ինդեքս, ապա մեկ արտասահմանյան պետությունում կատարվող ներդրումների սահմանաչափը որոշելու համար հաշվի է առնվում.
    1) ֆորվարդ և ֆյուչերս գործարքների դեպքում՝ պայմանագրի անվանական արժեքը՝ բազմապատկչի և ինդեքսի արժեքի արտադրյալի չափով,
    2) օպցիոն գործարքների դեպքում՝ պայմանագրի անվանական արժեքի (բազմապատկչի և ինդեքսի արժեքի արտադրյալի չափով) և օպցիոնի դելտայի արտադրյալը:

12 հունիսի 2026 թվականի թիվ 152-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի թիվ 93-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին *

Նպատակ ունենալով տնտեսական նորմատիվների հաշվարկման վերաբերյալ ստացվող տեղեկատվությունը համապատասխանեցնելու կիրառվող մեթոդաբանությանը,

հիմք ընդունելով «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 3-ի «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ը նոր խմբագրությամբ հաստատելու մասին» թիվ 93-Ն որոշմամբ հաստատված «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 15-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կանոնակարգի Հավելված 1-ի Ձև թիվ 3 հաշվետվության 3-րդ էջը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի:

2) Կանոնակարգի Հավելված 1-ի Ձև թիվ 3 հաշվետվության 4-րդ էջը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է դրանից հետո ներկայացվող հաշվետվությունների վրա:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Հովհաննես Խաչատրյան

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2026 թ. հունիսի 12-ին (ՀՀԳՏ, 30.06.2026):

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2026 թվականի հունիսի 12-ի թիվ 152-Ն որոշման

Նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող միջին ցուցանիշների հաշվարկը
(շարունակություն)
Ռիսկով կշռված ակտիվների հաշվարկն ըստ օրերի

Հաշվեկշռային հոդվածներ ըստ ռիսկերի, դրանց համապատասխան ակտիվների հնարավոր կորուստների մասհանումներ																									
Անցած օրերը	Ռիսկի 0 % կշիռ	Ակտիվի հնարավոր կորուստի մասհանում	Ռիսկի 10 % կշիռ	Ակտիվի հնարավոր կորուստի մասհանում	Ռիսկի 20 % կշիռ	Ակտիվի հնարավոր կորուստի մասհանում	Ռիսկի 30 % կշիռ	Ակտիվի հնարավոր կորուստի մասհանում	Ռիսկի 50 % կշիռ	Ակտիվի հնարավոր կորուստի մասհանում	Ռիսկի 75% կշիռ	Ակտիվի հնարավոր կորուստի մասհանում	Ռիսկի 85 % կշիռ	Ակտիվի հնարավոր կորուստի մասհանում	Ռիսկի 100 % կշիռ	Ակտիվի հնարավոր կորուստի մասհանում	Ռիսկի 110 % կշիռ	Ակտիվի հնարավոր կորուստի մասհանում	Ռիսկի 125 % կշիռ	Ակտիվի հնարավոր կորուստի մասհանում	Ռիսկի 150 % կշիռ	Ակտիվի հնարավոր կորուստի մասհանում	Ռիսկի 225 % կշիռ	Ակտիվի հնարավոր կորուստի մասհանում	Ռիսկով կշռված ակտիվներ [(1-2)*0% + (3-4)*10%+(5-6) * 20%+(7-8)*30%+(9-10)*50%+ (11-12)*75%+(13-14)*85%+(15-16)*100%+(17-18)*110%+(19-20)*125%+(21-22)*150%+(23-24)*225%]
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25
1																									
2																									
3																									
4																									
5																									
6																									
7																									
8																									
9																									
10																									

11																									
12																									
13																									
14																									
15																									
16																									
17																									
18																									
19																									
20																									
21																									
22																									
23																									
24																									
25																									
26																									
27																									
28																									
29																									
30																									
31																									
Միջին																									

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2026 թվականի հունիսի 12-ի թիվ 152-Ն որոշման

Նորմատիվների հաշվարկի մեջ ընդգրկվող միջին ցուցանիշների հաշվարկը
(շարունակություն)
Ռիսկով կշռված ակտիվների հաշվարկն ըստ օրերի

Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններ և անավարտ ժամկետային գործառնություններ (հետհաշվեկշռային հոդված) ըստ ռիսկի կշիռների, դրանց համապատասխան պահուստներ																									
Անվա օրերը	Ռիսկի 0% կշիռ	Պահուստ	Ռիսկի 10% կշիռ	Պահուստ	Ռիսկի 20% կշիռ	Պահուստ	Ռիսկի 30% կշիռ	Պահուստ	Ռիսկի 50% կշիռ	Պահուստ	Ռիսկի 75% կշիռ	Պահուստ	Ռիսկի 85% կշիռ	Պահուստ	Ռիսկի 100% կշիռ	Պահուստ	Ռիսկի 110% կշիռ	Պահուստ	Ռիսկի 125% կշիռ	Պահուստ	Ռիսկի 150% կշիռ	Պահուստ	Ռիսկի 225% կշիռ	Պահուստ	Ռիսկով կշռված հետհաշվեկշռային հոդվածներ[[(1-2)*0% + (3-4)* 10%+(5-6)*20%+(7-8)*30%+ (9-10)*50%+(11-12)*75%+ (13-14)*85%+ (15-16)*100%+ (17-18)*110%+(19-20)*125%+ (21-22)*150%+(23-24)*225%]
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25
1																									
2																									
3																									
4																									
5																									
6																									
7																									
8																									
9																									

10																									
11																									
12																									
13																									
14																									
15																									
16																									
17																									
18																									
19																									
20																									
21																									
22																									
23																									
24																									
25																									
26																									
27																									
28																									
29																									
30																									
31																									
Միջին																									

12 հունիսի 2026 թվականի թիվ 153-Ն

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 29-ի թիվ 142-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին *

Նպատակ ունենալով ապահովելու վարկատուների համար տվյալների ներկայացման սկզբունքների հասկանալի և պարզ նկարագրություն,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետը և 35-րդ հոդվածի 3-րդ մասը,

ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 29-ի «Վարկային տեղեկատվական համակարգի՝ վարկային ռեգիստրի ստեղծման և վարկային ռեգիստրին Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի մասնակցության կարգը հաստատելու մասին» թիվ 142-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի և վարկային կազմակերպությունների հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի՝ վարկային ռեգիստրի ստեղծման և վարկային ռեգիստրին Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի մասնակցության» կարգում (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կարգի 1-ին գլխի 3-րդ կետի 1-ին ենթակետից հանել «արժութային սվոփից» բառերը:

2) Կարգի 2-րդ գլխի 6-րդ կետում.

ա. «Վարկային ռեգիստրի գրությամբ» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկի Վարկային ռեգիստրը վարելու համար պատասխանատու կառուցվածքային միավորի ղեկավարի գրությամբ» բառերով,

բ. «ղեկավարի կամ վարկատուի այլ» բառերից հետո լրացնել «համապատասխան իրավասություն ունեցող» բառերով,

գ. «ղեկավարի կողմից:» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն. «Վարկատուն պարտավոր է հեռացված վարկի ճիշտ տարբերակը մուտքագրել՝ Վարկային ռեգիստրի կողմից վարկի հեռացման հաստատմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, եթե Կենտրոնական բանկի Վարկային ռեգիստրը վարելու համար պատասխանատու կառուցվածքային միավորի ղեկավարի գրությամբ այլ ժամկետ սահմանված չէ:»:

3) Կարգի 2-րդ գլխի 9-րդ կետի «բանկի» բառը փոխարինել «վարկատուի» բառով:

4) Կարգի 2-րդ գլխի 11-րդ կետում «նոր տարբերակի» բառերից հետո «,» կետադրական նշանը փոխարինել «:» կետադրական նշանով և հանել «ինչպես նաև XSD ֆայլի տարբերակի համարը (օրինակ՝ LR3v171230.xsd, որտեղ «LR3»-ը հաշվետվության նույնականացուցիչն է, «v171230»-ն հաշվետվության տարբերակն է, որը համարակալվում է հաշվետվության ուժի մեջ մտնելու ամսաթվով, «v»-ն նիշերի բաժանարարն է, որին հաջորդում է ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ yymmdd ֆորմատով)» բառերը:

5) Կարգի 4-րդ գլխի վերնագրից հանել «ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ» բառերը:

6) Կարգի 5-րդ գլխի վերնագրից հանել «ԴԱՇՏԵՐԻ ԵՎ ՁԵՎԱՉԱՓԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԵԼՔԱՅԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ» բառերը:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2026 թ. հունիսի 12-ին (ՀՀԳՏ, 26.06.2026):

7) Կարգի 5-րդ գլխի 29-րդ կետի 1-ին ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր «ԻԳ.» պարբերությամբ.

«**ԻԳ. ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ՝ ԸՍՏ ՉԱՓԻ** - ԼՐԱՑՎՈՒՄ Է ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ՝ ԸՍՏ «ՉԱՓԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ» ՏԵՂԵԿԱԳՐԻ: ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ՈՒ ՏՎՅԱԼ ՏԵՂԵԿԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 377-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ԲԱՆԿԵՐԻՑ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ» ՀԱՎԵԼՎԱԾ 5-Ի ՀԱՄԱՁԱՅՆ:»:

8) Կարգի 5-րդ գլխի 29-րդ կետի 2-րդ ենթակետի «**Գ.**» պարբերության մեջ «անվանումը» բառից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «՝» կետադրական նշանով և լրացնել «համաձայն տվյալ իրավաբանական անձի կանոնադրության մեջ առկա կրճատ տարբերակի:» բառերը:

9) Կարգի 5-րդ գլխի 29-րդ կետի 2-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր «**ԺԳ.**» պարբերությամբ.

«**ԺԳ. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ՝ ԸՍՏ ՉԱՓԻ** - ԼՐԱՑՎՈՒՄ Է ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ՝ ԸՍՏ «ՉԱՓԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ» ՏԵՂԵԿԱԳՐԻ: ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ՈՒ ՏՎՅԱԼ ՏԵՂԵԿԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 377-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ԲԱՆԿԵՐԻՑ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ» ՀԱՎԵԼՎԱԾ 5-Ի ՀԱՄԱՁԱՅՆ:»:

10) Կարգի 5-րդ գլխի 29-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**3) ՀՀ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ՄԱՐՄԻՆ -** ԸՆՏՐՎՈՒՄ Է «ԱՆՁԻ ՏԵՍԱԿԻ» ՏԵՂԵԿԱԳՐԻՑ, ԵԹԵ ՄԱՍՆԱԿԻՑԸ՝ ՎԱՐԿԱՌՈՒՆ, ՀԱՄԱՎԱՐԿԱՌՈՒՆ, ԵՐԱՇԽԱՎՈՐԸ ԿԱՄ ԵՐԱՇԽԻՔ ՏՐԱՄԱԴՐՈՂԸ, ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ, ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԸ ՀՀ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ՄԱՐՄԻՆ Է:

Ա. ՀՀ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆԴԵՍ ԳԱԼԸ - ԼՐԱՑՎՈՒՄ Է՝ «ԱՅՈ», ՀՀ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ՄԱՐՄՆԻ ԴԵՊՔՈՒՄ:

Բ. ՀՀ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ՄԱՐՄԻՆԸ - ԼՐԱՑՎՈՒՄ Է ՀՀ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ՄԱՐՄՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԸՍՏ «ՀՀ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ՄԱՐՄՆԻ» ՏԵՂԵԿԱԳՐԻ:

Գ. ՀՀ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ՄԱՐՄՆԻ «ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՑԻՉԸ» (BANKID) - ԼՐԱՑՎՈՒՄ Է ՀՀ ԿԲ-Ի ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ «ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆ» ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ «ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՑԻՉԸ» (BANKID):

Դ. ՀՀ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ- ԼՐԱՑՎՈՒՄ Է ՀՀ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝ ԸՍՏ ՀԱՍՑԵԻ ՁԵՎԱՉԱՓԻ:»:

11) Կարգի 5-րդ գլխի 29-րդ կետի 7-րդ ենթակետի վերնագրում և տվյալ ենթակետի «**Ա.**»,«**Բ.**»,«**Գ.**»,«**Դ.**» պարբերություններում «/» նշանը փոխարինել «**ԿԱՄ**» բառով:

12) Կարգի 5-րդ գլխի 29-րդ կետի 7-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր «**Գ1.**» և «**Գ2.**» պարբերություններով.

«**Գ1. ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ԿԱՄ ԵՐԱՇԽԻՔ ՏՐԱՄԱԴՐՈՂԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ** - ԼՐԱՑՎՈՒՄ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ԿԱՄ ԵՐԱՇԽԻՔ ՏՐԱՄԱԴՐՈՂԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի ԹԻՎ 2-Ն ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ԹԻՎ 39-Ն ՀԱՄԱՏԵՂ ՈՐՈՇՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԻ»:

Գ2. ՎԱՐԿԱՏՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ԿԱՄ ԵՐԱՇԽԻՔ ՏՐԱՄԱԴՐՈՂԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԼՐԱՑՆՈՒՄ ԿԱՄ ԹԱՐՄԱՑՆՈՒՄ Է ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՄՍՎԱ ՎԵՐՋԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ՝ ՆՈՒՅՆ ՕՐՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԴՐԱՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ: ՎԱՐԿԱՏՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ԿԱՄ ԵՐԱՇԽԻՔ ՏՐԱՄԱԴՐՈՂԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՋՐՈՅԱՑՆՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՄԱՐՄԱՆ ՕՐՎԱՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ: ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ԿԱՄ ԵՐԱՇԽԻՔ ՏՐԱՄԱԴՐՈՂԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՃՇԳՐՏՎՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ՄԱՐՄԱՆ ՕՐՎԱՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ:»:

13) Կարգի 5-րդ գլխի 29-րդ կետի 10-րդ ենթակետի «**Ա.**» պարբերությունում «ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԿՈԴԸ» բառերից հետո «:» կետադրական նշանը փոխարինել «,» կետադրական նշանով և լրացնել «ՈՐԸ ՉՊԵՏՔ Է ՓՈԽՎԻ ՎԱՐԿԻ ՀԵՌԱՑՄԱՆ ԵՎ ԿՐԿԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ:» բառերը:

14) Կարգի 5-րդ գլխի 29-րդ կետի 10-րդ ենթակետի «**ԺԶ.**» պարբերությունում «ՓԱՍՏԱՑԻ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ» բառերից հետո լրացնել «ԱՅՆ ԱՐԺՈՒՅԹՈՎ, ՈՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԵԼ Է ՎԱՐԿԸ» բառերը:

15) Կարգի 5-րդ գլխի 29-րդ կետի 10-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր «**ԺԹ.**» և «**Ժ.**» պարբերություններով.

«**ԺԹ. ՎԱՐԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄԸ** - ԵԹԵ ՎԱՐԿԸ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՎՈՂ Է, ԱՊԱ ԼՐԱՑՎՈՒՄ Է «ԱՅՈ», ՀԱԿԱՌԱԿ ԴԵՊՔՈՒՄ՝ «ՈՉ»: ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄԸ ԿԱՏԱՐՎԵԼ Է ՎԱՐԿԻ ՈՐԵՎԷ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱՐ, ԱՊԱ ԱՅԴ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ՏՎՅԱԼ ԴԱՇՏԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է «ՈՉ» ԱՐԺԵՔԸ:

***Ժժ.* ՎԱՐԿԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ** - ԼՐԱՑՎՈՒՄ Է ՓԱՍՏԱՑԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ԱՅՆ ԱՐԺՈՒՅԹՈՎ, ՈՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԵԼ Է ՎԱՐԿԸ (ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ):»:

16) Կարգի 5-րդ գլխի 29-րդ կետի 10-րդ ենթակետի «**ԻԳ.**» և «**ԻԴ.**» պարբերություններն ուժը կորցրած ճանաչել:

17) Կարգի 5-րդ գլխի 29-րդ կետի 10-րդ ենթակետի «**ԻԵ.**» պարբերությունում «ՓԱՍՏԱՑԻ ՎՃԱՐՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ» բառերից հետո լրացնել «ԱՅՆ ԱՐԺՈՒՅԹՈՎ, ՈՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԵԼ Է ՎԱՐԿԸ՝ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ» բառերը:

18) Կարգի 5-րդ գլխի 29-րդ կետի 10-րդ ենթակետի «**ԻԷ.-ԻԹ.**» պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**ԻԷ. ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ** - ԵԹԵ ՎԱՐԿԸ ՏՐԱՄԱԴՐՎԵԼ Է ՈՐԵՎԷ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ, ԱՊԱ ԼՐԱՑՎՈՒՄ Է ԱՅԴ ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ԸՍՏ «ԾՐԱԳՐԵՐԻ» ՏԵՂԵԿԱԳՐԻ:

ԻԸ. ՎԱՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏԸ - ԼՐԱՑՎՈՒՄ Է ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՅՆ ՃՅՈՒՂԸ, ՈՐՏԵՂ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼՈՒ Է ՎԱՐԿԻ ԳԵՐԱԿՇՌՈՂ ՄԱՍԸ՝ ԸՍՏ «ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՎԱՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏԻ» ՏԵՂԵԿԱԳՐԻ: ԵԹԵ ՎԱՐԿԸ ՀԱՎԱՍԱՐԱՉԱՓ Է ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ ՏԱՐԲԵՐ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ԱՊԱ ԼՐԱՑՎՈՒՄ Է ՎԱՐԿԱՌՈՒԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՎԵԼ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ՈԼՈՐՏԸ:

ՎԱՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԼՐԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ Է ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ: ՎԱՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԼՐԱՑՎՈՒՄ Է, ԵՐԲ ՎԱՐԿԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ Է ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ՋԲԱՂՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ:

ԻԹ. ՎԱՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ - ԼՐԱՑՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ՝ ԸՍՏ «ՎԱՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԻ» ՏԵՂԵԿԱԳՐԻ: ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ, ԼՐԱՑՎՈՒՄ Է ԱՅՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ, ՈՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ Է ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԵՐԱԿՇԻՌ ՄԱՍԸ: ԵԹԵ ՎԱՐԿԸ ՀԱՎԱՍԱՐԱՉԱՓ Է ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ ՏԱՐԲԵՐ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ԱՊԱ ԼՐԱՑՎՈՒՄ Է ՆՊԱՏԱԿՆԵՐԻՑ ՈՐԵՎԷ ՄԵԿԸ: ՏՎՅԱԼ ՏԵՂԵԿԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 377-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ԲԱՆԿԵՐԻՑ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԿԱՐԳԻ» ՀԱՄԱՁԱՅՆ:

ՎԱՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԼՐԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ Է ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ՝ ԸՍՏ «ՎԱՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿ» ՏԵՂԵԿԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ:»:

19) Կարգի 5-րդ գլխի 29-րդ կետի 10-րդ ենթակետի «**ԼԱ.-ԽԲ.**» պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԼԱ. ՎԱՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ - ԼՐԱՑՎՈՒՄ Է ԱՅՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ, ՈՐՏԵՂ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼՈՒ Է ՎԱՐԿԻ ԳԵՐԱԿՇԻՌ ՄԱՍԸ՝ ԸՍՏ «ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ» ՏԵՂԵԿԱԳՐԻ: ԸՆԴ ՈՐՈՒՄ, ԸՆՏՐՎՈՒՄ Է ԱՄԵՆԱՍՏՈՐԻՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԿՈԴԱՎՈՐՈՒՄԸ, ՈՐԸ ՆԵՐԱՌՈՒՄ Է ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿՈԴԵՐԸ: ԵԹԵ ՎԱՐԿԸ ՀԱՎԱՍԱՐԱՉԱՓ Է ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ ՏԱՐԲԵՐ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ, ԱՊԱ ԼՐԱՑՎՈՒՄ Է ԱՅԴ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻՑ ՈՐԵՎԷ ՄԵԿԸ:

ԼԲ. ՎԱՐԿԸ ԺԱՄԿԵՏԱՆՑ ԴԱՌՆԱԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ - ԼՐԱՑՎՈՒՄ Է ԱՅՆ ԱՄՍԱԹԻՎԸ, ՈՐ ՕՐՎԱՆԻՑ ԺԱՄԿԵՏԱՆՑ ԵՆ ԴԱՐՁԵԼ ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԸ, ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ, ԱՌԿԱ ԵՆ ՎԱՐԿԻ ԳԾՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԱՅԼ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ: ԵԹԵ ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԸ, ՏՈԿՈՍՆԵՐԸ, ՎԱՐԿԻ ԳԾՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԱՅԼ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՏՈՒՅԺԵՐԸ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԸ ԺԱՄԿԵՏԱՆՑ ԵՆ ԴԱՐՁԵԼ ՏԱՐԲԵՐ ԱՄՍԱԹՎԵՐԻ, ԱՊԱ ՆՇՎՈՒՄ Է ԴՐԱՆՑԻՑ ԱՌԱՋԻՆԸ:

ՎԱՐԿԸ ԺԱՄԿԵՏԱՆՑ ԴԱՌՆԱԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ ԿԱՐՈՂ Է ՓՈՓՈԽՎԵԼ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ՝ ՄԱՍՆԱԿԻ ՄԱՐՄԱՆ ՕՐՎԱՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՈՒՄ: ՎԱՐԿԸ ԺԱՄԿԵՏԱՆՑ ԴԱՌՆԱԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ ԶՐՈՅԱՑՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՌԿԱ ԲՈԼՈՐ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐ, ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐ, ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ, ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԱՅԼ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ՝ ՄԱՐՄԱՆ ՕՐՎԱՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՈՒՄ: ՎԱՐԿԸ ԺԱՄԿԵՏԱՆՑ ԴԱՌՆԱԼՈՒ ԱՄՍԱԹԻՎԸ ԶՐՈՅԱՑՎՈՒՄ Է ՆԱԵՎ ԱՅՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ, ԵՐԲ ՎԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՌԿԱ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ ՉԻ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ 1000 ՀՀ ԴՐԱՄԸ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԸ):

ԼԳ. ՎԱՐԿԻ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԸ - ԼՐԱՑՎՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԺԱՄԿԵՏԻՆ ՉՄԱՐՎԱԾ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԸ ԱՅՆ ԱՐԺՈՒՅԹՈՎ, ՈՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԵԼ Է ՎԱՐԿԸ: ԺԱՄԿԵՏԱՆՑ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԸ ԹԱՐՄԱՑՎՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ: ՎԱՐԿԱՏՈՒՆ ՎԱՐԿԻ ԳԾՈՎ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՅՆ ԶՐՈՅԱՑՆՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՄԱՐՄԱՆ ՕՐՎԱՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ: ԺԱՄԿԵՏԱՆՑ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՅՆ ՆՎԱՂԵՑՎՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ՄԱՐՄԱՆ ՕՐՎԱՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

ԼԴ. ՎԱՐԿԻ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ - ԼՐԱՑՎՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԺԱՄԿԵՏԻՆ ՉՄԱՐՎԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ ԱՅՆ ԱՐԺՈՒՅԹՈՎ, ՈՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԵԼ Է ՎԱՐԿԸ: ԺԱՄԿԵՏԱՆՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԸ ԹԱՐՄԱՑՎՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ: ՎԱՐԿԱՏՈՒՆ ՎԱՐԿԻ ԳԾՈՎ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՅՆ ԶՐՈՅԱՑՆՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՄԱՐՄԱՆ ՕՐՎԱՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ: ԺԱՄԿԵՏԱՆՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՅՆ ՆՎԱՂԵՑՎՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ՄԱՐՄԱՆ ՕՐՎԱՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

ԼԵ. ՎԱՐԿԻ ԳԾՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԱՅԼ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ - ԼՐԱՑՎՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՉՄԱՐՎԱԾ ՎԱՐԿԻ ԳԾՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԿՈՄԻՍԻՈՆ ՎՃԱՐՆԵՐ, ԳԵՐԱԾԱԽՍԵՐ ԵՎ ԱՅԼՆ) ԱՅՆ ԱՐԺՈՒՅԹՈՎ, ՈՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԵԼ Է ՎԱՐԿԸ: ՎԱՐԿԻ ԳԾՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԱՅԼ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԱՐՄԱՑՎՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ: ՎԱՐԿԱՏՈՒՆ ՎԱՐԿԻ ԳԾՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԱՅԼ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՄԱՆ

ԴԵՊՔՈՒՄ ԱՅՆ ԶՐՈՅԱՑՆՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՄԱՐՄԱՆ ՕՐՎԱՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ: ՎԱՐԿԻ ԳԾՈՎ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՅՆ ՆՎԱԶԵՑՎՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ՄԱՐՄԱՆ ՕՐՎԱՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

ԼԶ. ՎԱՐԿԻ ԳԾՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐԻ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ - ԼՐԱՑՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ԳԾՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐԻ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ ԱՅՆ ԱՐԺՈՒՅԹՈՎ, ՈՐՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԵԼ Է ՎԱՐԿԸ: ՎԱՐԿԻ ԳԾՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐԻ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԸ ԹԱՐՄԱՑՎՈՒՄ Է ԱՌՆՎԱԶՆ ՇԱԲԱԹԸ ՄԵԿ ԱՆԳԱՄ՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՇԱԲԱԹՎԱ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ (ՆԱԽՈՐԴ ՕՐՎԱ ՎԵՐՋԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ), ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՄՍՎԱ ՎԵՐՋԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ (ՆՈՒՅՆ ՕՐՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ) ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ: ՎԱՐԿԱՏՈՒՆ ՎԱՐԿԻ ԳԾՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐԻ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՅՆ ԶՐՈՅԱՑՆՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՄԱՐՄԱՆ ՕՐՎԱՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ: ՎԱՐԿԻ ԳԾՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈՒՅԺԵՐԻ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՅՆ ՆՎԱԶԵՑՎՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ՄԱՐՄԱՆ ՕՐՎԱՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

ԼԷ. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ԴԱՍԸ - ԼՐԱՑՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ԴԱՍԸ՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի ԹԻՎ 2-Ն ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ԹԻՎ 39-Ն ՀԱՄԱՏԵՂ ՈՐՈՇՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԻ»: ՎԱՐԿԸ ՀԵՏՀԱՇՎԵԿՇՈՒՑ ԴՈՒՐՍ ԳՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԼՐԱՑՎՈՒՄ Է «ՉՀԱՇՎԱՌՎՈՂ»: ՆՇՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՉԴԱՍԱԿԱՐԳՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՀԱՄԱՐ ԼՐԱՑՎՈՒՄ Է «ՉԴԱՍԱԿԱՐԳՎՈՂ» (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝ ԲԼԱՆԿԱՅԻՆ ԱԿՏԻՎԻ):

ԼԸ. ՎԱՐԿԻ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ - ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ՎԱՐԿԸ ԴԱՍԱԿԱՐԳՎՈՒՄ Է ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի ԹԻՎ 2-Ն ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ԹԻՎ 39-Ն ՀԱՄԱՏԵՂ ՈՐՈՇՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳՈՎ» ՍԱՀՄԱՆՎԱԾ ՕԲՅԵԿՏԻՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ, ԼՐԱՑՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ, ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԻ, ՎԱՐԿԻ ԳԾՈՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԱՅԼ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՏՈՒՅԺԵՐԻ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ: ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ՎԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՌԿԱ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԵՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ 1000 ՀՀ ԴՐԱՄԸ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԸ), ԱՊԱ ԱՅՍ ԴԱՇՏԸ ՉԻ ԼՐԱՑՎՈՒՄ: ԵՐԲ ԱՅԴ ՎԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՌԿԱ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԴԵՆ ՍԿՍՈՒՄ ԵՆ ԳԵՐԱԶԱՆՑԵԼ 1000 ՀՀ ԴՐԱՄԸ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԸ), ԱՊԱ ԱՅԴ ՎԱՐԿԻ ԳԾՈՎ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՕՐԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ ԵՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ՝ ՍԿՍԱԾ 1000 ՀՀ ԴՐԱՄԸ (ՀԱՄԱՐԺԵՔ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԸ) ԳԵՐԱԶԱՆՑԵԼՈՒ ՕՐՎԱՆԻՑ: ԵԹԵ «ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ԴԱՍԸ» ԴԱՇՏՈՒՄ ԼՐԱՑՎԱԾ Է «ՉԴԱՍԱԿԱՐԳՎՈՂ» ԿԱՄ «ՉՀԱՇՎԱՌՎՈՂ», ԱՊԱ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԼՐԱՑՎՈՒՄ Է «0»:

ՎԱՐԿԱՏՈՒՆ ԳՈՐԾՈՂ ՎԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԼՐԱՑՆՈՒՄ ԿԱՄ ԹԱՐՄԱՑՆՈՒՄ Է ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՄՍՎԱ ՎԵՐՋԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ (ՆՈՒՅՆ ՕՐՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ) ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ: ՎԱՐԿԱՏՈՒՆ ՎԱՐԿԻ ԳԾՈՎ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԶՐՈՅԱՑՆՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՄԱՐՄԱՆ ՕՐՎԱՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ: ՎԱՐԿԻ ԳԾՈՎ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՄԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ (ԵԹԵ ՎԱՐԿԱՏՈՒՆ ԿԱՏԱՐՈՒՄ Է ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿ) ԺԱՄԿԵՏԱՆՑ ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՆՎԱԶԵՑՎՈՒՄ ԵՎ

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ՄԱՐՄԱՆ ՕՐՎԱՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԱԿՏԻՎԸ ՎԵՐԱՆԱՅՎՈՒՄ Է՝ ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի ԹԻՎ 2-Ն ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ԹԻՎ 39-Ն ՀԱՄԱՏԵՂ ՈՐՈՇՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԻ», ՍՈՒՅՆ ԴԱՇՏՈՒՄ ԱՌԿԱ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՕՐԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ ԴԱԴԱՐՈՒՄ Է: ՏՎՅԱԼ ԴԱՇՏՈՒՄ ԱՌԿԱ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՕՐԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ՎԵՐՍԿՍՈՒՄ Է ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԾԱԳԱԾ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՕՐԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԴՐԱՆՔ ԳՈՒՄԱՐԵԼՈՎ ՍՈՒՅՆ ԴԱՇՏՈՒՄ ԱՐԴԵՆ ԻՍԿ ԱՌԿԱ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՕՐԵՐԻՆ: ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԱԿՏԻՎԻ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ, ԵԹԵ ԱԿՏԻՎԸ ՉՈՒՆԻ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՊԱ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՕՐԵՐԸ ՋՐՈՅԱՑՎՈՒՄ ԵՆ:

ԼԹ. ՎԱՐԿԻ ՎԵՐՋԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ - ԼՐԱՑՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի ԹԻՎ 2-Ն ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ԹԻՎ 39-Ն ՀԱՄԱՏԵՂ ՈՐՈՇՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳՈՎ» ՍԱՀՄԱՆՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԻՍԿԻ ԴԱՍԻ ՎԵՐՋԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ:

«Խ. ՎԱՐԿԻ ՎԵՐՋԻՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ - ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ՎԱՐԿԸ ՎԵՐԱՆԱՅՎՈՒՄ Է ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի ԹԻՎ 2-Ն ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ԹԻՎ 39-Ն ՀԱՄԱՏԵՂ ՈՐՈՇՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԻ»՝ ԼՐԱՑՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՎԵՐՋԻՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՄՍԱԹԻՎԸ:

ԽԱ. ՎԱՐԿԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄՆԵՐԻ ԹԻՎԸ - ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ՎԱՐԿԸ ՎԵՐԱՆԱՅՎՈՒՄ Է ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի ԹԻՎ 2-Ն ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ԹԻՎ 39-Ն ՀԱՄԱՏԵՂ ՈՐՈՇՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԻ»՝ ԼՐԱՑՎՈՒՄ Է ՎԵՐԱՆԱՅՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ (ԳՈՒՄԱՐԱՅԻՆ):

ԽԲ. ՎԱՐԿԻ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ - ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ՎԱՐԿԸ ՎԵՐԱՆԱՅՎՈՒՄ Է ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի ԹԻՎ 2-Ն ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ԹԻՎ 39-Ն ՀԱՄԱՏԵՂ ՈՐՈՇՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԻ»՝ ԼՐԱՑՎՈՒՄ Է ՎԱՐԿԻ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ՝ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՎԱՐԿԻ ԱՌԱՋԻՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԱՄՍԱԹՎԻՑ:

ՎԱՐԿԱՍՏՈՒՆ ՎԱՐԿԻ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԼՐԱՑՆՈՒՄ ԿԱՄ ԹԱՐՄԱՑՆՈՒՄ Է ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՄՍՎԱ ՎԵՐՋԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ (ՆՈՒՅՆ ՕՐՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ) ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ: ՎԱՐԿԻ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿԱՄ ՋՐՈՅԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՍՏՈՒՆ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ ՆՎԱԶԵՑՆՈՒՄ ԿԱՄ ՋՐՈՅԱՑՆՈՒՄ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԿԱՄ ՋՐՈՅԱՑՄԱՆ ՕՐՎԱՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ:»:

20) Կարգի 5-րդ գլխի 29-րդ կետի 10-րդ ենթակետի «**ԽԴ.**» պարբերությունում «ՎԱՐԿԸ ՄԱՐՎԱԾ Է» բառերից հետո լրացնել «ԿԱՄ ՎԱՐԿԱՌՈՒՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ՎԱՐԿԻՑ» բառերը:

21) Կարգի 5-րդ գլխի 29-րդ կետի 11-րդ ենթակետի «**Ա.**» պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով.

«ԳՐԱՎԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՑԻՉԸ ՉԻ ՓՈՓՈԽՎՈՒՄ ԳՐԱՎԻ ՏՎՅԱԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ: ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՐԱՎԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐՈՒՄ Է (ՆՇՎԱԾԸ ՉԻ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ՎԱՐԿԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՄԱՐՄԱՆԸ), ՎԱՐԿԱՏՈՒՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՄԱՆ ՕՐՎԱՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ Է ՈՒՂԱՐԿՈՒՄ ԳՐԱՎԻ ՀԵՌԱՑՈՒՄ: ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԿՆՔՎՈՒՄ Է ԳՐԱՎԻ ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՆՈՐ ԳՐԱՎԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՑԻՉ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ Է ՈՒՂԱՐԿՎՈՒՄ ԳՐԱՎԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆԸ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

ԳՐԱՎԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՑԻՉԸ ՉԻ ՓՈԽՎՈՒՄ ՆԱԵՎ ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ՄԻԵՎՆՈՒՅՆ ԳՈՒՅՔԸ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱ Է ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՎԱՐԿԵՐԻ ՀԱՄԱՐ:»:

22) Կարգի 5-րդ գլխի 29-րդ կետի 11-րդ ենթակետի «**Դ.**» և «**Ե.**» պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Դ. ԳՐԱՎԻ ԳՆԱՀԱՏՎԱԾ ԱՐԺԵՔԸ - ԼՐԱՑՎՈՒՄ Է ԳՐԱՎԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՆՇՎԱԾ ԳՐԱՎԻ ԳՆԱՀԱՏՎԱԾ ԱՐԺԵՔԸ՝ ԸՍՏ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԺՈՒՅԹԻ: ԳՐԱՎԻ ԱՐԺԵՔԻ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆՈՐ ԱՐԺԵՔԸ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՕՐՎԱՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

ԱՅՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ, ԵՐԲ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՎԻ ԱՌԱՐԿԱ ԵՆ ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ, ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՇԻՎ(ՆԵՐ)Ը, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԸ (ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ԵՎ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ) ԿԱՄ ԱՅԼ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԱՊԱ ՎԵՐՈՆՇՅԱԼ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՇԵՄԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ «ԳՐԱՎԻ ԳՆԱՀԱՏՎԱԾ ԱՐԺԵՔԸ» ԴԱՇՏՈՒՄ ԼՐԱՑՎՈՒՄ Է ԱՅԴ ԳՈՒՄԱՐԸ, ՀԱԿԱՌԱԿ ԴԵՊՔՈՒՄ՝ ԼՐԱՑՎՈՒՄ Է «0»:

Ե. ԳՐԱՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՅԼ ՆՇՈՒՄՆԵՐ - ԼՐԱՑՎՈՒՄ Է ԳՐԱՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՅԼ ԷԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ (ՕՐԻՆԱԿ՝ ԲԱԺՆԵՏՈՒՄԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՊԵՏՔ Է ՆՇՎԻ ԳՐԱՎԱԴՐՎՈՂ ԲԱԺՆԵՏՈՒՄԻ ԲԱԺՆԵՄԱՍԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ՈՐԻ ԲԱԺՆԵՏՈՒՄՍԸ ԳՐԱՎԱԴՐՎՈՒՄ Է, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՀԱՄԱՐԸ, ՀԱՍՑԵՆ, ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՐԱՎԱԴՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ՝ ՄԱԿՆԻՇԸ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՀԱՄԱՐԸ ԵՎ ԱՅԼՆ):»:

23) Կարգի 5-րդ գլխի 30-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«30. ՎԱՐԿԱՏՈՒՆԵՐԸ ՀԱՎԵԼՎԱԾ 1-ՈՒՄ ՆՇՎԱԾ ՏԵՂԵԿԱԳՐԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՆՈՒՄ ԵՆ «ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ» ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԴԻՆԱՄԻԿ ՏԵՂԵԿԱԳՐԵՐԻ ԲԵՌՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԵԲ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ՝ ՈՒՂԱՐԿԵԼՈՎ 1010 ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ԴԻՆԱՄԻԿ ՏԵՂԵԿԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԿԱՄ 1011 ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝ ԿՈՆԿՐԵՏ ԴԻՆԱՄԻԿ ՏԵՂԵԿԱԳՐԵՐԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ:»:

24) Կարգի Հավելված 1-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա. աղյուսակի 1.-ին կետի 1.9 տողում «ՊԱՐՏԱԴԻՐ» բառը փոխարինել «ՕԺԱՆԴԱԿ» բառով,

բ. աղյուսակը 1.-ին կետի 1.22 տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 1.23 տողով.

1.23	ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ՝ ԸՍՏ ՉԱՓԻ	ՓՈՓՈԽԱԿԱՆ	ՊԱՐՏԱԴԻՐ	1.23 ԴԱՇՏԸ ԼՐԱՑՎՈՒՄ Է ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ 1.5 ԴԱՇՏՆ ՈՒՆԻ «Y» («ԱՅՈ») ԱՐԺԵՔԸ:	ՏԵՂԵԿԱԳԻՐ	x

գ. աղյուսակը 2.-րդ կետի 2.12 տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 2.13 տողով.

2.13	ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ՝ ԸՍՏ ՉԱՓԻ	ՓՈՓՈԽԱԿԱՆ	ՊԱՐՏԱԴԻՐ		ՏԵՂԵԿԱԳԻՐ	x

դ. աղյուսակի 3.-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

3.1	ՀՀ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆԴԵՍ ԳԱԼԸ	ՀԱՍՏԱՏՈՒՆ	ՊԱՐՏԱԴԻՐ	ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Է ՎԵՐԻՖԻԿԱՑԻԱՅԻՆ:	ՏԵՂԵԿԱԳԻՐ (ԱՅՈ/ՈՉ)	1a
3.2	ՀՀ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ՄԱՐՄԻՆԸ	ՀԱՍՏԱՏՈՒՆ	ՊԱՐՏԱԴԻՐ	ՄԱՍՆԱԿՑՈՒՄ Է ՎԵՐԻՖԻԿԱՑԻԱՅԻՆ:	ՏԵՂԵԿԱԳԻՐ	n
3.3	ՀՀ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ՄԱՐՄՆԻ «ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՑԻՉ» (BANKID)	ՀԱՍՏԱՏՈՒՆ	ՕԺԱՆԴԱԿ			13n
3.4	ՀՀ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ	ՓՈՓՈԽԱԿԱՆ	ՊԱՐՏԱԴԻՐ			ՀԱՍՑԵԻ ՁԵՎԱՉԱՓ

ե. աղյուսակի «ՎԱՐԿԻ ՏՎՅԱԼՆԵՐ» կետի 3.1-3.5 տողերում «/» նշանը փոխարինել «կամ» բառով,

զ. աղյուսակը «ՎԱՐԿԻ ՏՎՅԱԼՆԵՐ» 3.5 տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 3.6 տողով.

3.6	ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ԿԱՄ ԵՐԱՇԽԻՔ ՏՐԱՄԱԴՐՈՂԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ	ՓՈՓՈԽԱԿԱՆ	ՕԺԱՆԴԱԿ			n

է. աղյուսակի «ՎԱՐԿԻ ՏՎՅԱԼՆԵՐ» կետի 6.22 և 6.23 տողերում «ՎԱՐԿԻ» բառից հետո հանել «ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ» բառերը,

ը. աղյուսակի «ՎԱՐԿԻ ՏՎՅԱԼՆԵՐ» կետի 6.26 տողում «ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ» բառերից հետո հանել «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ» բառը,

թ. աղյուսակի «ՎԱՐԿԻ ՏՎՅԱԼՆԵՐ» կետի 6.27 և 6.28 տողերում «ՀԱՍՏԱՏՈՒՆ» բառը փոխարինել «ՓՈՓՈԽԱԿԱՆ» բառով,

ժ. աղյուսակի 6.3 տողում «ՄԱՐԶԸ» բառը փոխարինել «ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ» բառերով:

25) Ուժը կորցրած ճանաչել Կարգի Հավելված 2-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրվանից:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի փոխարինող Հովհաննես Խաչատրյան

«Հավելված 1

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի

2005 թվականի մարտի 29-ի թիվ 142-Ն որոշման Հավելված 1-ի

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԵՐՆ ՈՒ ՁԵՎԱՉԱՓԵՐԸ

1. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁ

Հ/Հ	Անվանումը	Փոփոխման հնարավորություն	Ներկայացման անհրաժեշտություն	Այլ նշումներ	Սահմանա-փակումներ	Ձևաչափ*
1.1	Ֆիզիկական անձի «Միասնական բանկային նույնականացուցիչը» (BankID)	հաստատուն	օժանդակ			13n
1.2	Ֆիզիկական անձի անունը	փոփոխական	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային:***		128x
1.3	Ֆիզիկական անձի ազգանունը	փոփոխական	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային:***		128x
1.4	Ֆիզիկական անձի հայրանունը	փոփոխական	օժանդակ			128x
1.5	Ֆիզիկական անձի անհատ ձեռնարկատեր լինելը	փոփոխական	օժանդակ		տեղեկագիր (Այո/Ոչ)	1a
1.6	Անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	փոփոխական	պարտադիր	1.6-1.9 դաշտերը լրացվում են այն դեպքում, երբ 1.5 դաշտն ունի «Y» («Այո») արժեքը:		128x
1.7	Անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի պետական ռեգիստրում հաշվառման համարը	փոփոխական	օժանդակ			3n.3n.5n
1.8	Անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի պետական ռեգիստրում հաշվառման ամսաթիվը	փոփոխական	օժանդակ			10date
1.9	Անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի գործունեության ոլորտը	փոփոխական	օժանդակ		տեղեկագիր	2n.3n
1.10	Ֆիզիկական անձը հաստատող փաստաթղթի տեսակը	փոփոխական	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային:***	տեղեկագիր	x
1.11	Ֆիզիկական անձը հաստատող փաստաթղթի համարը	փոփոխական	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային:***		1x-30x
1.12	Ֆիզիկական անձի հանրային ծառայությունների համարանիշը	հաստատուն	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային (Ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար պարտադիր լրացման ենթակա է կամ 1.12, կամ 1.13 դաշտը):***		10n
1.13	Ֆիզիկական անձի հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը	հաստատուն	պարտադիր			50x
1.14	Ֆիզիկական անձի ծննդյան ամսաթիվը	հաստատուն	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային:***		10date
1.15	Ֆիզիկական անձի սեռը	փոփոխական	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային***	տեղեկագիր (M/F)	1a

1.16	Ֆիզիկական անձի ռեզիդենտության երկիրը	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	3a
1.17	Ֆիզիկական անձի գրանցման հասցեն	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	հասցեի ձևաչափ
1.18	Ֆիզիկական անձի փաստացի բնակության հասցեն	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	հասցեի ձևաչափ
1.19	Ֆիզիկական անձի զբաղվածության կարգավիճակը	փոփոխական	օժանդակ		տեղեկագիր	n
1.20	Ֆիզիկական անձի կրթական մակարդակը	փոփոխական	օժանդակ		տեղեկագիր	n
1.21	Ֆիզիկական անձի ընտանեկան կարգավիճակը	փոփոխական	օժանդակ		տեղեկագիր	n
1.22	Ֆիզիկական անձի ընտանիքի անդամների քանակը	փոփոխական	օժանդակ			n
1.23	Անհատ ձեռնարկատեր ֆիզիկական անձի դասակարգումը՝ ըստ չափի	փոփոխական	պարտադիր	1.23 դաշտը լրացվում է այն դեպքում, երբ 1.5 դաշտն ունի «Y» («Այո») արժեքը:	տեղեկագիր	x

* *Չևաչափերի նկարագրության մեջ օգտագործվում են կոդեր, որոնք ունեն հետևյալ իմաստները՝*

***a**-տառային*

***n**-թվային*

***x**-տառաթվային*

***number**- թվային կոդ է, որը ներառում է նաև տասնորդական կետորակը, օգտագործվում է գումարներ, տոկոսներ ներկայացնելիս*

***nn**- փվյալը պարտադիր պետք է ներկայացված լինի նշված քանակի նիշերով:*

2. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁ

Հ/Հ	Անվանումը	Փոփոխման հնարավորություն	Ներկայացման անհրաժեշտություն	Այլ նշումներ	Սահմանա-փակումներ	Ձևաչափ
2.1	Իրավաբանական անձի «Միասնական բանկային նույնականացուցիչը» (BankID)	հաստատուն	օժանդակ			13n
2.2	Իրավաբանական անձի ռեզիդենտության երկիր	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	3a
2.3	Իրավաբանական անձի անվանումը	փոփոխական	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային:***		256x
2.4	Իրավաբանական անձի կազմակերպական-իրավական տեսակը	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	n
2.5	Իրավաբանական անձի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) / Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձի անհատականացման համարը	հաստատուն	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային:***		128x
2.6	Իրավաբանական անձի պետական ռեգիստրում գրանցման համարը	փոփոխական	օժանդակ			3n.3n.5n
2.7	Իրավաբանական անձի պետական ռեգիստրում գրանցման ամսաթիվը	փոփոխական	օժանդակ			10date
2.8	Իրավաբանական անձի սեփականության ձևը	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	n
2.9	Իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի «Միասնական բանկային նույնականացուցիչը» (BankID)	փոփոխական	պարտադիր			13n
2.1	Իրավաբանական անձի գործունեության ոլորտը	փոփոխական	օժանդակ		տեղեկագիր	2n.3n
2.11	Իրավաբանական անձի գործունեության գրանցման հասցեն	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	հասցեի ձևաչափ
2.12	Իրավաբանական անձի փաստացի գործունեության հասցեն	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	հասցեի ձևաչափ
2.13	Իրավաբանական անձի դասակարգումը՝ ըստ չափի	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	x

3. ՀՀ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ՄԱՐՄԻՆ

Հ/Հ	Անվանումը	Փոփոխման հնարավորություն	Ներկայացման անհրաժեշ-տություն	Այլ նշումներ	Սահմանա-փակումներ	Ձևաչափ
3.1	ՀՀ անունից հանդես գալը	հաստատուն	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային:***	տեղեկագիր (Այո/Ոչ)	1a
3.2	ՀՀ անունից հանդես եկող մարմինը	հաստատուն	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային:***	տեղեկագիր	n
3.3	ՀՀ անունից հանդես եկող մարմնի «Միասնական Բանկային Նույնականացուցիչ» (BankID)	հաստատուն	օժանդակ			13n
3.4	ՀՀ անունից հանդես եկող մարմնի գործունեության հասցեն	փոփոխական	պարտադիր			հասցեի ձևաչափ

4. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ ՀԱՆԴԵՍ ԵԿՈՂ ՄԱՐՄԻՆ

Հ/Հ	Անվանումը	Փոփոխման հնարավորություն	Ներկայացման անհրաժեշտություն	Այլ նշումներ	Սահմանա-փակումներ	Ձևաչափ
4.1	Օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի «Միասնական Բանկային Նույնականացուցիչ» (BankID)	հաստատուն	օժանդակ			13n
4.2	Օտարերկրյա պետության կոդը	հաստատուն	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային:***	տեղեկագիր	3a
4.3	Օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի տեսակը	հաստատուն	պարտադիր	***Մասնակցում է վերիֆիկացիային:***	տեղեկագիր	n
4.4	Օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի անվանումը	փոփոխական	պարտադիր			256x
4.5	Օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի գործունեության հասցեն	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	հասցեի ձևաչափ

5. ՀԱՍՑԵԻ ՁԵՎԱՉԱՓ

Հ/Հ	Անվանումը	Փոփոխման հնարավորություն	Ներկայացման անհրաժեշտություն	Այլ նշումներ	Սահմանա-փակումներ	Ձևաչափ
5.1	Երկիր	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	3a
5.2	Մարզ/Շրջան-Համայնք-Բնակավայր/Վարչական շրջան	փոփոխական	պարտադիր		տեղեկագիր	9n
5.3	Փողոց	փոփոխական	օժանդակ			512x
5.4	Տուն/շենք	փոփոխական	օժանդակ			128x
5.5	Բնակարան	փոփոխական	օժանդակ			128x

ՎԱՐԿԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Հ/Հ	Անվանումը	Փոփոխման հնարավորություն	Ներկայացման անհրաժեշտություն	Այլ նշումներ	Սահմանափակումներ	Ձևաչափ
1	**Վարկառու**	**հաստատուն**	**պարտադիր**			
1.1	Վարկառուի «Միասնական բանկային նույնականացուցիչը» (BankID)	հաստատուն	պարտադիր			13n
